մի երրորդ ոյժ դայ նրանց փոխարինելու։ Երբ ես Պոլսում լսեցի անգլիական զօրքերի Կովկասից հեռանալու մասին՝ հեռագրով բողոքեցի Փարիզ Քլէմանսօին և Վեհաժողովին այդ որոշման դէմ։ Այժմ այդ հարցը քննւում է Փարիզում, և ես յոյս ունեմ, որ անգլիական զօրքերը կը մնան այստեղ։ Իսկ եթէ նոյնիսկ հեռանան էլ, մեր գործը պէտք է լինի գտնել դրանց փոխարինող ուրիշ զօրքեր։

Երկրի պարենաւորման, զինման, ելևմուտքի կարգաւորման և այլ խնդիրների մասին ես արդէն կարգադրութիւններ արել եմ, սակայն, նայում եմ դրանց վրա, իբրև երկրորդական խնդիրների։ Անկասկած է, որ Ազրբէջանի կառավարութիւնը խախտել է անգլիական իշխանութիւնից ստացած հրահանգները, և այդ խնդիրն է այս րոպէիս ինձ զբաղեցնում։ Ես մեկնում եմ Թիֆլիս և կը պահանջեմ, որ Ազրբէջանը վերջ տայ այդ բանին, հակառակ դէպքում Ազրբէջանի կառավարութեան անդամները կենթարկւեն անձնական պատասխանատուութեան։

Թիֆլիսում ես կը հանդիպեմ զօրավար Հարբօրտին, որը Ֆրանսայում գործող ամերիկեան բանակի սպայակոյտի պետն է։ Ես նրա հետ պիտի խորհրդակցեմ այն հարցի մասին, թէ ի՞նչ ձևով պէտք է օգնել Հայաստանին։ Այս վայրկեանիս Փարիզից ճանապարհ են ընկել մի խումբ սպաներ—մասնագէտներ՝ զինուորական և այլ ճիւղերի վերաբերմամբ։ Եթէ տարածութիւնը խանգարի իմ յարաբերութիւններին Փարիզի հետ, ես ինքս անձամբ կը մեկնեմ Սև Ծովում գտնւող ամենաարագընթաց ականակիրով Մարսէյլ—Փարիզ՝ դեկուցանելու համար Վեհաժողովին և խնդրելու Վեհաժողովից և ամերիկեան ժողովրդից շուտափոյթ օգնութիւն հասցնել հայ ժողովրդին։ Միևնոյն ժամանակ հայ ժողովրդի և կառավարութեան վերաբերմունքը դէպի իր հարևանները պէտք է լինի բարեացակամ, որպէսզի հարևանները պարենաւորման և այլ խնդիրներում դժւարութիւններ չյարուցանեն։ Ես միանգամայն կախւած եմ ժողովրդի և կառավարութեան աջակցութիւնից։ Այժմ քաղաքական վէճերի ժամանակը չէ։ Պէտք է մտածել ժողովրդի փրկութեան մասին։

Ո՛չ մի նշանակութիւն չպէտք է տալ այն բանին, որ այս կամ այն երկիրը խլում է միւսից մի քանի վերստ հողամաս։ Այդ հանգամանքը ոչ մի նշանակութիւն չի կարող ունենալ այս կամ այն երկրի սահմանները վերջնականապէս որոշելու համար Փարիզում. ինչպէս որ եղաւ Բէլգիայի և Ռումանիայի վերաբերմամբ։

Այսպիսով, հայ ժողովրդին մնում է սպասել դաշնակիցների օգնութեանը։ Շնորհակալ եմ ինձ ցոյց տրւած ջերմ ընդունելութեան համար և ցանկանում եմ ձեզ եռանդ և ոգևորութիւն»։

Օգոստ. 23-ին Հասկելը շտապով մեկնեց Թիֆլիս և այնտեղից Բաքու՝ Ազրբէջանի կառավարութեան հետ կարգադրելու համար Շարուր—Նախիջևանի հարցը։ Եւ օգոստ. 29-ին, Ուսուպբէգովի հետ ստորագրեց մի պայմանագիր, որ բոլորովին հակասում էր Երևանում տւած խոստումներին։

Այդ պայմանագրի համաձայն «Շարուր-Դարալագեազի և Նախիջևանի գաւառներում պիտի հաստատւի չէզոք շրջան», որի կառավարութիւնը պիտի յանձնւի գնդ. Հասկելի նշանակած ընդհանուր-նահանգապետին։ Երկու կողմերն այդ շրջանից հանում են իրենց զօրքերն ու գործակալներին, և կազմակերպւում է տեղական իշխանութիւն։